ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 39-Լ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, 17-ԻՆ, 24-ԻՆ ԵՎ 31-ԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ-ՔՆՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ) ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԱՎԱՐՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանելու մասին» թիվ 2138-Ն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 10-ին, 17-ին, 24-ին և 31-ին Ճանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների ծառայողների (քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց) աշխատաժամանակի սկիզբը և ավարտը՝

1) Ճանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների համար 2020 թվականի հոկտեմբերի 10-ին, 17-ին, 24-ին և 31-ին սահմանել հետևյալ աշխատանքային ռեժիմը.

ա) ժամը 09:00-18:00 (քաղաքացիների մուտքը՝ ժամը 09:00-17:00, զննության կայանում՝ ժամը 09:00-16:30),

բ) ստորաբաժանման համար ընդմիջում չի սահմանվում, իսկ ծառայողներին (քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց) ընդմիջում տրվում է հերթականությամբ՝ սկսած 12:00-ից՝ 1 ժամ տևողությամբ:

2. Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանին՝ ապահովել Ճանապարհային ոստիկանության տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումների մուտքի մոտ՝ տեսանելի տեղում, 2020 թվականի հոկտեմբերի 10-ին, 17-ին, 24-ին և 31-ին աշխատանքի ռեժիմի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակության հետ կապի և լրատվության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ահարոնյանին՝ հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետերով սահմանված աշխատանքային ռեժիմի վերաբերյալ տեղեկատվությունը տարածել հնարավոր լրատվամիջոցներով և տեղադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կայքում:

4. Հրամանը հայտարարել Ճանապարհային ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:

ԳՆԴԱՊԵՏ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«02» 10 2020թ.

ք.Երևան